ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր
Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան
arahakobean@gmail.com

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2020 թվականին աշխարհի ժողովուրդները նշելու են մարդկության պատմության մեջ ամենադաժան և մահասփյուռ պատերազմի՝ Երկրորդ համաշխարհայինի (1939–1945 թթ.) հաղթական ավարտի 75-րդ տարեդարձը: Հայ ժողովուրդը, լինելով Խորհրդային Միության կազմի մեջ, հավասարապես կրեց այդ աշխարհամարտի ծանր արհավիրքները՝ հարյուր հազարավոր զոհեր, վիրավորներ, անհայտ կորածներ…

Հետպատերազմյան առաջին տարիներին Մեծ հաղթանակի ցնծությունների ու համաժողովրդական տոնախմբությունների մթնոլորտում, ինչ-որ ժամանակ, կորուստների մասին կարծես չէին ուզում խոսել: Դեռ ըմբոշխնում էին բերկրանքի ու հպարտության պահերը: Այդուհանդերձ, արթուն էր այն միտքը, որ պատերազմում զոհվածներն էլ մեր հերոսներն էին, և առանց նրանց արյան չէր կարող կոփվել հաղթանակը:

Յոթ ու կես տասնամյակ անց ասես ավելի տեսանելի դարձան Մեծ հաղթանակի նշանակությունը, այդ պատերազմում նահատակված հայորդիների սխրանքները: Ֆաշիստական Գերմանիայի հոգեհարազատ դաշնակիցը՝ քեմալական Թուրքիան, այդ տարիներին սպասում էր հարմար առիթի՝ ներխուժելու Հայոց երկիր, ևս մեկ սպանդ գործելու մեր ժողովրդի նկատմամբ: Ահա այդ նկատառումով էլ առավել ևս կարևորվում է Հայրենականի ահեղ գոտեմարտում հերոսի մահով զոհված մեր քաջարի տղաների հիշատակի հավերժացման սուրբ գործը:

Վաղ ժամանակներից ի վեր մարդ-արարածի ուշադրության կենտրոնում է եղել կյանքի ու մահվան, հայրենիքի ու իր ժողովրդի համար նահատակվածների սխրանքը հավերժացնելու գաղափարը: Դա ինչ-որ չափով սփոփում է վիշտը, թեկուզ և զուտ քրիստոնեական ընկալմամբ՝ մարդը ֆիզիկապես չկա, բայց նրա էությունը կազմող հոգին գնում է Աստծո մոտ, մնում է հավերժ:

Վերջին տասնամյակներում այդ նպատակն իրագործելու երախտաշատ գործին լծվեցին բազմաթիվ նվիրյալներ, առաջին հերթին, գրականության և արվեստի գործիչներ՝ ջանալով հետևողական պրպտումների ու փնտրտուքի միջոցով հայտնաբերել նոր տեղեկություններ, նորովի լուսաբանել ահեղ գոտեմարտերի դրվագները, դեռևս շատ կողմերով անհայտ մնացած հայ ռազմիկներին վիճակված ծանր ճակատագիրը:

Այդ շնորհակալ գործի առաջին ջատագովներից մեկը եղավ Հայաստանի ազգային պատկերասրահի Հուշաձեռագրային բաժնի ավագ գիտաշխատող Անգին Առաքելյանը: Նրա սկսած գործի առաջին ծիծեռնակը դարձավ «Սուրիկը» խորագրով գիրքը: Ինչի մասին էր դա. երջանիկ պատահականությամբ, Անգին Առաքելյանը ծանոթանում է Լոս Անջելեսում բնակվող տիկին Մերի Փաշայան-Հակոբյանի հետ: Բարեսիրտ ու բարյացակամ Մերին մանրամասն պատմում է իր ամուսնու՝ հայաստանցի Սուրիկի կյանքի ոդիսականը: Շիրակում ծնված աչքաբաց տղան երիտասարդ տարիներին՝ 1930-ական թթ., մեկնում է Երևան և ընդունվում «Գեղարդ» նկարչական տեխնիկում: Մեծանուն արվեստագետ մանկավարժներ, շնորհալի, աշխատասեր դասընկերներ... Մի նոր աշխարհ, մտավոր նոր միջավայր, որտեղ փայլատակում է գավառից եկած երիտասարդի միտքն ու տաղանդը: Ճանաչումն ու համարումը չի ուշանում: 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին նվիրված ցուցահանդեսում ներկայացվում է Սուրիկ Հակոբյանի «Արաբ ծերունու հանդիպումը Դավթին» թեմայով գործը: Դա ընդհանուր հիացումի ու բարձր գնահատականի է արժանանում: Որոշ ժամանակ անց այդ սքանչելի աշխատանքը նվիրվում է Ավետիք Իսահակյանին՝ ծննդյան 65-ամյակի կապակցությամբ:

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը. Սուրիկը ռազմաճակատում է. նրա գունդը՝ շրջապատման անելանելի օղակում. ապա՝ գերության ծանր տարիները Գերմանիայում: Վերջնական հանգրվանը Ամերիկայի Միացյալ Նահանգներում է. ամուսնանում է օրիորդ Մերի Փաշայանի հետ. ունենում են երկու գեղեցիկ աղջնակներ...

Գրքում, կենսագրական ու ռազմաճակատային տեղեկություններից բացի, զետեղված են նաև Սուրիկ Հակոբյանի՝ մեկ տասնյակից ավելի գունավոր կտավների արտատպություններ: Վերջիններս իրենց հորինվածքային և մանավանդ գունային պայծառ լուծումներով թերևս թարմ խոսք են 60-ականների հայ կերպարվեստում: Ըստ էության, «հայտնաբերվել է» շնորհաշատ մի հայ նկարիչ, որին ժամանակների խառնակ ու դաժան տարիները կտրել են

հայրենի հողից, գցել հեռավոր՝ օտար ափեր: Նրա անունը կարող էր մոռացվել ոչ հոգեհարազատ այդ միջավայրում, եթե չլինեին Անգին Առաքելյանի անձնուրաց ջանքերը: Սրտամոտ աշխատանքն ու մասնագիտությունը ջանասեր հեղինակին կարծես հարկադրում են շարունակելու ձեռնարկած գործը՝ հետամուտ լինել և սերունդներին փոխանցել Մեծ հայրենականում զոհված հայ նկարիչների պայքարին առնչվող դրվագները, ինչպես նաև պահպանված ստեղծագործական մասունքները:

«Սուրիկը» գրքից հետո հրապարակ իջավ Անգին Առաքելյանի «Անավարտ դիմանկարներ» խորագրով գեղեցիկ հատորը (Երևան, 2007 թ.): Դա արդեն հանրագիտարանային բնույթի գործ է, ճշմարիտ հուշապատում, որը երկար տարիների լռությունից հետո լույս աշխարհ հանեց ուշագրավ շատ նյութեր՝ Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում զոհված հայ նկարիչների կյանքի ու գործունեության՝ շատերիս համար անհայտ, բայց խիստ կարևոր փաստական տվյալներ. դրանք հեղինակի տարիների որոնումների արդյունքն են:

Հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ հատորում իրենց երկրորդ կյանքը ստացան մի մեծ խումբ տաղանդավոր անհատներ՝ Կորյուն Սիմոնյան, Լևոն Տոնականյան, Վանիկ Կարապետյան, Սարգիս Ալեքսանյան, Անդրանիկ Մարկոսյան, Սերոբ Անճարակյան, Վանիկ Սևաչյան, Զորիկ Մադաթյան, Զազիկ Ալթունյան, Լևոն Թոթովենց, Օնիկ Կաժոյան…

Նրանց կարճատև կյանքի ու ռազմաճակատային սխրանքների մասին գրելով՝ Ա. Առաքելյանը ներկայացնում է նաև այդ տաղանդավոր անձանց տեսական ըմբռնումները արվեստի մասին: Պատերազմի լարված ու դժվարին այդ տարիներին նրանք խոսել են նաև մշակույթի հասարակական-քաղաքական նշանակության, դրանց հատուկ ուղղվածության մասին: Օրինակ, երևելի անհատականություններ Ցոլակ Ազիզյանին, Խաչատուր Եսայանին և բանաստեղծ Նաիրի Զարյանին Կորյուն Սիմոնյանի գրած նամակներում առկա են կերպարվեստի մասին շատ ելակետային դրույթներ. «Արվեստի ամենահիմնական հատկանիշներից գլխավորը հուզականությունն է. արվեստագետը պետք է թափանցի իրականություն, մարդկանց հոգեկան աշխարհի մեջ և ոչ թե հնարի, այլ խորապես հարազատ լինի ժամանակին»: Կորյուն Սիմոնյանը նույնիսկ ռազմաճակատից աշխատանքներ է ուղարկել Երևան՝ ցուցադրելու համար՝ կարծելով, որ ինքը՝ որպես արվեստագետ, պետք է մասնակցի Հայաստանի մշակութային իրադարձություններին:

Հայրենիքին և հայրենի աշխարհին կապված լինելու օրինակներ կան նաև մեր մյուս տղաների հուշագրություններում: Ահա այս տեսակետից սույն հատորը ինչ-որ չափով ձեռք է բերում սկզբնաղբյուրային նշանակություն:

Հ. Գրիգորյան, Պարաշյուտային աշտարակ, 1938

Ս. Մովսիսյան, Կոլտնտեսուհի, 1940



Հ. Հակոբյան, Բալլադ զոհվածների մասին, 1968



Հ. Ավետիսյան, Չվերադարձան, 1975

Անգին Առաքելյանը տարիներ շարունակ համբերատարությամբ ու սիրով որոնել, գտել, հավաքել ու պահել է մեր երիտասարդ նահատակների հուշերը, որտեղ արտացոլվում են նրանց երազանքները, նաև մտքերը կյանքի ու արվեստի մասին: «Անավարտ դիմանկարներ» հուշապատումի շնորհիվ հնարավոր է ծանոթանալ կյանքից անժամանակ հեռացած շնորհաշատ արվեստագետների կարճ, բայց գեղեցիկ կենսագրությանը, նրանց գեղագիտական մտորումներին:

Գրքում զետեղված հարյուրից ավելի գունավոր, սև ու սպիտակ արտատպություններ անմիջական պատկերացում են տալիս անձնվեր հայորդիների գեղարվեստական օժտվածության ու գեղագիտական մտորումների մասին: Ավելին, որոշ դեպքերում նրանց ստեղծագործություններն առիթ ու խթան են դարձել նույն թեմաների նորովի մեկնաբանման, ընդհանրապես՝ նոր մտահղացումների համար: Այսպես, ամերիկահայ նկարչուհի Հասմիկ Սահակյանը յուրովի է մեկնաբանել մեր հերոս մարտիրոսներին նվիրված՝ պատերազմի մասնակից, գեղանկարիչ Հմայակ Ավետիսյանի «Չվերադարձան» կտավը (1975 թ.): Ըստ Հասմիկի, Կորյուն Սիմոնյանը, Սարգիս Ալեքսանյանը, Վանիկ Կարապետյանը, Անդրանիկ Մարկոսյանը և Լևոն Տոնականյանը ոչ թե երազի պես հավաքված են արվեստանոցում (նստած են կամ

կանգնած), այլ ինչպես հոգի-հրեշտակներ՝ վերևից կարոտով նայում են մեզ. մեր խաղաղ կյանքի համար են նրանք երկնքում հայտնվել:

Ի դեպ, ասենք, որ ամերիկահայ երիտասարդ, շնորհալի գեղանկարչուհի Հասմիկը դիմանկարներ ստեղծելու փայլուն ձիրք ունի, համենայնդեպս, երաժիշտ-ճարտարապետ Արթուր Մեսչյանի և իր հորեղբոր պատկերները դրա մասին են վկայում:

Եվս մեկ անգամ թերթելով «Անավարտ դիմանկարներ» սքանչելի հուշապատումը՝ երախտագիտությամբ ես լցվում հայրենասեր մտավորական, արվեստաբան Անգին Առաքելյանի նկատմամբ, որն իրագործել է նման արժեքավոր աշխատանք: Եվ ի հիշատակ մեր նահատակ-նկարիչների տեղին է մեր խոսքը ավարտել Միխայիլ Լերմոնտովի «Բորոդինո» բանաստեղծության տողերով.

Այո՛, կային մարդիկ մեր ժամանակ, դյուցազուններ…
Բախտը եղավ նրանց համար դաժան –
Քչերն արյան դաշտից վերադարձան…